ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N ------ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՋԱՀԱՆԳԻՐ ԱՂԱՅԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Շահինյան փողոցի 4-րդ նրբանցքն անվանակոչել եզդիների ազգային հերոս Ջահանգիր աղայի անվամբ՝ «Ջահանգիր աղայի փողոց»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՋԱՀԱՆԳԻՐ ԱՂԱՅԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եզդի ժողովրդի ազգային հերոս Ջահանգիր աղան ծնվել է 1874թ. Վանի գավառի Չիբուխլի գյուղում, եզդիների ցեղապետ Խատիֆ աղայի ընտանիքում:

1888թ. հոր մահից հետո Ջահանգիր աղան դարձել է ցեղի առաջնորդ: Նա եղել է Վանի գավառի 12 եզդիաբնակ գյուղերի ղեկավար:

Ցեղասպանության տարիներին Ջահանգիր աղան, իր զինվորականների օգնությամբ, ապահովել է հայ և եզդի գաղթականների անվտանգ տեղաշարժը Արևելյան Հայաստան:

1915թ. տեղափոխվել է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատել Ապարանի Ջառջառիս գյուղում:

Ջահանգիր աղան ակտիվ մասնակցություն է ցուցաբերել 1918թ. Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերին: Նա իր ենթակայության տակ գտնվող 1500 հոգանոց հեծյալ ջոկատով մասնակցել է ճակատամարտի ողջ ընթացքին:

Հայկական բանակի կազմում ևս Ջահանգիր աղան՝ Դրաստամարտ Կանայանի հրամանատարությամբ շարունակել է պայքարը: Հայկական և ռուսական զորամասերի հետ Ջահանգիր աղայի ջոկատներն ակտիվ մասնակցել են նաև Կարսի, Սարիղամիշի մարտերին:

1918թ. քաջության և խիզախության համար Ջահանգիր աղան պարգևատրվել է «Գևորգյան» խաչով:

1938թ. աքսորվել է: Ջահանգիր աղան մահացել է 1943թ. աքսորավայրում, որտեղ էլ հանձնվել է հողին: 1956թ. նա արդարացվել է:

Ջահանգիր աղայի անվամբ Երևան քաղաքում փողոց անվանակոչելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել «Եզդի և հայ ժողովուրդների բարեկամություն» հասարակական կազմակերպության նախագահ Ս. Բաքոյանի, «Սինջար» եզդիների ազգային միավորում հասարակական կազմակերպության նախագահ Բ.Թամոյանի, «Հայասա» երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահ Ս.Մկրտչյանի, ՀՀ քաղաքացիներ Սուրեն Խատոյանի և Վազիր Խատոևի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՋԱՀԱՆԳԻՐ ԱՂԱՅԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ջահանգիր աղայի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՋԱՀԱՆԳԻՐ ԱՂԱՅԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ջահանգիր աղայի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ